

գոյն ջանքն եղաւ այնպիսի ամենապարզ գրութիւն մը հնարել, որ նոյն իսկ տարրաբանութենէ տեղեկութիւն չունեցող անձինք կարենան գործադրել, իրենց այս երկար աշխատութիւնքն ունայն չելան. վասն զի կրցան հակազդակ մի պատրաստել՝ որոյ վրայ բաւական է գինւոյ կաթիլ մը հեղուլ և գունասորիչ հակազդեցութիւնն իմանալ. կարծիր գինեաց հակազդեցութիւնն՝ կանայազոյն բիծով կը հասկըցուի. մինչդեռ արուեստիւ գունաւորեալքն՝ կարմիր, թուխ, մանիշակագոյն և ուրիշ զանազան գոյներով բծեր կը թողուն, ըստ գործածուած գունաւորիչ նիւթոյ տեսակին:

Այս եղանակս դիւրին և առձեռն պատրաստ փորձ մ'է, և միանգամայն մեծապէս յահաւէտ կը համարուի այն անձանց՝ որք տարին ողջոյն գինեաց վաճառման վրայ հսկողութիւն բնելու պարտք ունին, ոչ միայն այն քաղաքաց և գիւղորէից մէջ՝ ուր բնաւ տարրաբանական գործատուն չգտնուիր, այլ նոյն իսկ կնգրոնական տեղեաց մէջ, Բաց տակից, որ և իցէ անձ ինչ ժամանակ որ ուզելու ըլլայ, կրնայ ինքն իրեն ստուգել թէ արդեօք իւր ունեցած գինին արուեստական նիւթով գունաւորեալ է թէ ոչ:

Կարի գործաճշտիւնն զքարիւղ մարեցնելու. — Յանկարծական դէպք մը կաթի ունեցած նոր տեսակ գործածութիւնն յայտնեց՝ որ մինչև ցարդ անժանօթ էր, խոհակեր կնկան մը ձեռքէն դիպուածով վառած քարիւղի կանթեղն իյնալով կը կոտորի և մէջի քարիւղը կը սկսի բորբոքիլ, և կինը բոցերու մէջ կը մնայ: Զարհուրած այսպիսի անյուսալի զժգաղէութենէ և վախնալով որ տան մէջ կրակ մը սկսի, կ'առնու նիւթապէս մերձակայ անօթն՝ որոյ մէջ կաթ կը գտնուէր, և կրակին վրայ կը թափէ զայն: Քարիւղը իսկ և իսկ կը մարի:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ



Գաղղիա. — Գաղղիոյ պաշտօնարանը վերջապէս յետ երկար ընդգիմութեան կապուեցաւ ընդ նախագահութեամբ Թիւրարի Այս պաշտօնարանին առաջին և արժանաւայել գործն եղաւ, ամէն ջանք ընել տ'Օմալի մուտքը դիւրացնելու համար. և յիշատի յաջողեցաւ իսկ. վասն զի բաց ՚ի սակաւաթիւ հակառակորդաց՝ գրեթէ ամէն դասակարգի քաղաքացւոց սիրելի ընծայեր էր ինքզինքը այս քաջ և մեծանձն իշխանը. ուստի նախագահն Քառնոյ առանց յապաղելու ստորագրեց իւր վերադարձի վճիռն: Շատ մեծ ուրախութիւն ղգաց, ինչպէս ինքն իսկ յայտնեց, Գաղղիոյ հողոյն վրայ վերբստին ուղղրած ժամանակ. հասնելով ՚ի Փարիզ իսկոյն նախագահին այցելեց, և իւր շնորհակալութիւնն մատուցած ժամանակ՝ աշխուական և վեհանձն աճով իմացուց նախագահին՝ որ ըրածը ոչ եթէ մեծ շնորհք մ'էր, այլ պարզ

արդարութեան և ուղիղ դատման արդիւնք մը: Այսօրեմիայն ալ ընդունեցաւ զինքը մեծ արտի գոհութեամբ. և նկատելով ի գուրսն առատաձեռն բարերար մը, ընդունելութեան ճառը խօսեցաւ հռչակաւորն խիւլ — Սիմոն: Կաղղիական ընդհանուր լրագրութիւնն կարծես այլ ևս ձանձրացած նշանաւոր զօրավարէն՝ փոփոխակի դրուատեց և պարսաւաւորաց նիւթ առաւ զհռչակաւոր գուրսն տ'Սիմալ: Շատերը ջանացին մերձեցնել այս երկու անձնաւորութիւնքն որ կարծես տարրեր միջոցներով մի և նոյն նպատակին կը ծառայեն, սակայն անօգուտ աշխատանք եղաւ և գործն անհնարին:

Պոլլանժէ զօրավարը այս օրերս Դուռի հացկերութիւն մէջ նշանաւոր ճառախօսութիւն մ'ըրաւ. ոմանք իր խօսքերուն քաղաքական նշանաւոր հանգամանք չեն ընծայեր, բայց մեծամասնութիւնը կը դատէ զայն յիրաւի քաղաքական գէպք մը: Այս ճառիս մէջ Պոլլանժէ հին հասարակապետաւ կանխ մը զգեստը կարծես վրան առեր է, այնչափ հասարակապետութեան սիրոյ ցոյցներ կ'ընէ:

Հին պաշտօնեայն Ռուփիէ ուրիշ հացկերութի մը առթիւ մօտ օրերս զօրավարին պիտէ պատասխանէ: Գաղղիոյ և Ռուսիոյ մէջ ծագած փոքրիկ տհաճութեան առիթը մօտ օրերս խափանեցաւ՝ Ալէքսովիչնոս գառնալովն:

Իտալիա: — Տէրութեան ելեւմտից պաշտօնէին անբաւականութեան և այլ անհամաձայնութեանց պատճառաւ Գաղղիոյ նման Իտալիոյ պաշտօնաւորան ալ ընկաւ: Թագաւորը Քրիսթի նախագահին յանձնեց որ նոր պաշտօնարանը կազմէ, սա ալ յանձն առաւ. սակայն զժուարութիւնը կեդրոնացրէր էր վերալիշեալ պաշտօնարանին վրայ. վասն զի տէրութեան կշիռը կէս միլիարդի բաց ունենալով, ոչ որ կը յուսար այս վիճը գոցել. և այս պատճառաւ իսկ որով ալ որ կը յանձնէր այս պաշտօնարանը՝ ոչ որ կ'ընդունէր. եղան ոմանք որ յանձն առին, բայց պայմանաւ յետս կոչելու. ամերիկեան իտալական բանակը. բայց վերջապէս նախագահը իւր սովորական խորագիտութեամբ՝ յաջողեցաւ կազմել նոր պաշտօնարանը ըստ իւր հաճոյից: Ամէն կերպով կը փափագին խնայութիւն ընել, բայց անհնարին է տէրութեան այս գիւրքին մէջ. կ'ուզեն հրաժարիլ ամերիկեան գաղթականութենէն կամ լաւ ևս տիրապետութենէն, բայց չեն համարձակիր, վասն զի ազգային պատուոյ և զրօշակին անարգանք կը համարին: Մօտ առնենքս Իտալիոյ Թագաւորն Հուլիոսը. Գերմանիա պիտի ուղևորի ի փոխադարձ այցելութիւն կայան, և այս վախճանաւ բազմաթիւ բանադնացութիւնք տեղի ունին երկու կառավարութեանց մէջ:

Սերպիա. — Բովանդակ եւրոպական մամուլը զբաղեր է այժմ Սերպիոյ Միլան Թագաւորին յանկարծակի հրաժեշտին. Թէպէտ իւր վերջին բարբառս և անտրժան գործը կատարելէն վերջը միշտ շարժմանց և անհնազիստ զիբրի մէջ էր, սակայն հրաժարումը ոչ որ կը մտածէր, Բնական է այսպիսի պարագայից մէջ զանազան կը լինին կարծիք և ենթադրութիւնք: Յարգ այս քաղաքական նշանաւոր զիպաց պատճառը և շարժառիթը Թէպէտ չյայտնուեցաւ, բայց բազում կը համարին թէ ներքին ընդգիծութեանց, սպառնալեան և յորդորանաց արդիւնք է. իսկ այլք զօրաւորագոյն և ստիպողական արտաքին պատճառ մը կ'ենթադրեն. կը յուսան որ քիչ առնեն կրնանք ստոյգը տեղեկանալ:

